

Բարի որդիք ընդ դստերին,  
Որդիս ազնիւ եւ դուստր նորին,  
Որ Ուզուհի վերաձայնի»:

Սօջայ Սաֆարի որդիներն էին Մէլիք աղա, Սօջայ Ֆռանդուլ,  
Սօջայ Սուլթան կամ Սուլթանուժ, Ջալալ Բէկ: Տեսնենք այժմ ա-  
նոնց մասին պատմական տուեալները, յաջորդաբար անցնելու հա-  
մար Սօջայ Սաֆարի եղբօր եւ անոր զերդաստանին պատմութեան:

### Մէլիք ԱՂԱ

Սօջայ Սաֆարի եւ Սուլթանփաշէի երէց որդին էր Մէլիք Աղան:  
Ան կը յիշատակուի 1604ին, Սօջայ Սաջիկի Յայսմաուրքին մէջ,  
Հին Ջուղայ: Ջինք կը յիշէ նաեւ Առաքել Դաւրիժեցի, երբ կ'ըսէ.  
«Շահ Աբաս առնէր սէր ընդ աղդին Հայոց եւ մեծարանս նոցա. եւ  
մանաւանդ ընդ Ջուղայեցւոց, որոց զլիաւորի անուն էր Սօջայ Սա-  
ֆար, եւ սորին եղբօրն՝ Սօջայ Նազար, եւ որդւոց սոցին՝ Մէլիք Ա-  
ղայ եւ Սուլթանուժ եւ Սարֆրազ: Եւ հանապազ ինքն Շահն դայր ի  
տունս նոցա, ուսէր ընդ նոսա զկերակուրս նոցա՝ առանց խտրելոյ,  
որպէս սովորութիւն է Պարսից առնել խտրութիւն ընդ քրիստոնէից.  
այլ եւ ինքն Շահն կոչէր զնոսա ի տուն եւ ի սեղան իւր, եւ պատուէր  
ընդ մեծամեծս իւր. այլ եւ պատուիրեալ էր իւրոց նախարարաց նոյն-  
պէս առնել»<sup>16</sup>:

Մէլիք Աղայի մասին քիչ են մեր ծանօթութիւնները: Կը թուի  
եղած ըլլալ զբասէր մէկը: Նիւ Եորքի 42րդ փողոցի եւ Ֆիֆթ Էյվը-  
նիւի Մատենադարանին ձեռագիրներու բաժնին մէջ՝ կը գտնուի հա-  
յերէն ձեռագիր ժողովածոյ մը (թիւ 1), ուր կայ 94 տուննոց յան-  
գաւոր «Յիշատակարան Աստուածաշունչ գրոց, արարեալ նոյն Ստե-  
փանոս երէց որդի Ստեփանոսի, ի խնդրոյ Պարոն Մէլիք Աղային,  
որդոյ Սալջայ Սաֆարին»: Կը սկսի.

«Ի քուականիս մեր Հայկազեան,  
Որ էր անցեալ քսան յորելեան,  
Այլ եւ եւթտասան աւելի լման,  
Գըրեցաւ շունչս աստուածական»:

Տրուած թուականը կրնայ ըլլալ Քրիստոսի 1621ը:  
Երկարաշունչ ոտանաւորը կ'աւարտի այսպէս:

«Իսկ ես նուաստ անձն անարժան,  
Տէր Ստեփանոս մեղացման,  
Չարեաւք լըցեալ բարեաց ունայն,